ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 300-Ա ՀՐԱՄԱՆ «05» ապրիլի 2021թ.

ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասի, 20-րդ մասի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի N 792-Ա որոշմամբ սահմանված հավելվածի 12-րդ կետի 2-րդ ենթակետը, կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշմամբ սահմանված հավելվածը, կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2.1-ին կետն, ինչպես նաև 2021 թվականի ապրիլի 2-ի Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի գլխավոր մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող ներքին մրցույթի հարցազրույցի մրցույթային հանձնաժողովի եզրակացությունն ու Դավիթ Դավթյանի կողմից ներկայացված 2021 թվականի ապրիլի 2-ի անձնական դիմումը

հրամայում եմ՝

1. 2021 թվականի ապրիլի 5-ից Դավիթ Դավթյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի գլխավոր

մասնագետի (ծածկագիր՝ 94-1.6-Մ2-4) պաշտոնում՝ լուծելով նրա հետ 2019 թվականի ապրիլի 15-ին կնքված N 07 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

2. Դավիթ Դավթյանի աշխատավարձը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

05.04.2021

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

ք. Գավառ